

Արեգ ամսեան» (յն. Գոսնթիկոս) : Ար. : Անդ, 170. «Եւ յետ սակաւ աւուրց տօնին, որ օր ԻԱ. էր Ահեկանի ամսոյ. յն. Արտեմիսիոս : Ար. : Անդ, է. 32, էջ 601. ԻՉ Պեմանդայ. ԻԲ Արաղայ (իմա՝ Աղարայ), «այսինքն ԺԱ. Արեգ ամսեան» : Ասորամակ. : Անդ, էջ 603. «ՅԱղար եւ Իրուլ, այսինքն յԱրեգ եւ ի Հոռի» : Ասորամակ. : Անդ, Ը. 3, էջ 620. «ՅԱրեգ ամսեան, ի ժամանակի իբրեւ մերձ էր օրն տօնի չարչարանաց Փրկչին մերոյ». յոյն «յամսեանն Դիւսարեայ, զոր Հոովմայեցիք Մարտ ասեն» : Ասորամակ. :

Եւսեբիոս, Գրոնիկոն, Ա. 32 եւ 49. «Ի Ժե Դէսիոս ամսոյ, որ է Մարերի» : Ար. : Պիոնի վկայութիւն⁸. «Որ օր ԻԲ էր Արեգ ամսոյ, երեքշաբթի օր. յն. յառաջ քան զչորս Իզոսի մարտ ամսոյ : Ասորամակ. : Փիլիկտիմոնի վկայար. «փոխեցաւ կին նորա, որ օր Ժե էր Յունուար ամսոյ, որ է Արաց : ...Ս. Թէոդոսիա կատարեցաւ որ օր ԺԲ էր Փետրուարի ամսոյ, որ է Մեհեկանի... Սերաստիանոս ...կատարեցաւ որ օր է էր Ապրիլի ամսոյ, որ է Ահեկանի... կատարեցաւ Ս. Փիլիկտիմոն որ օր է էր Մայիսի ամսոյ, որ է Մարերի». Վարք եւ վկայարանութիւնք Սրբոց. Բ. էջ 475 : Ասորամակեղ. :

Կիւրեղ, Կոչումն Ընծայութեան. էջ 280. «Արեգ ամիս հասեալք, աւասիկ դարուն է ժամանակս. այս է որ առ Հերայեցւոյքն Նիսան կոչեալ էր». յն. Գոսնթիկոս : Ար. : Եղիշէ, Վարդապետութիւն, էջ 242 (տպ. 1859). «Առաջին ամիսս այս, առէ, ձեզ սկիզբն ամսոց, որ է Արեգ ամիս» : Ար. : — «Ամենայն եպիսկոպոսունք եւ երեցունք պատուէր հրամանի տուեալ աշխարհին՝ զողջոյն ամիսն Քաղոց պահօք եւ աղօթիւք առնել խնդրուածս առ Աստուած եւ զտօն պատերազմացն յաղթութեան խոնոնել ի սուրբ տօն Յայնութեանն Քրիստոսի. զի անխափան կացցէ մեծ յիշատակարանս այս ընդ աստուածային անանց տօնին» (էջ 62) : Ար. Քաղոց = 8 Դեկտ.—7 Յունուար :

Եփրեմ, Ա. 224—225. «Յամսեանն, առէ, եւթներորդի ի տասն ամսոյն պահեստ» :

Չիք... : Որ օր Ժե էր Մարգաց ամսոյ էլ ի լեռնէ անտի Մովսէս... եւ խորտակեաց մանրեաց զորթն. եւ ամիսն է. զի ի նմա ետ նոցա պատուէր հրամանի պահել զպահան, Հոռի ամիս է» : է. ամիսն է Թշրին, որ Արարականին համաձայն կը պատասխանէր Հոռիի : Ուստի Մարգաց ամիսն ալ պէտք է ըլլայ Թամուզ ամսոյն զուգակիւ, որ է Յունիս : Այսպէս նաեւ Բ., էջ 217 եւ 218. «ՅԱրեգ ամսեան պատասեն ծաղիկք զծոցս իւրեանց եւ ելանեն... յԱրեգ ամսեան դարձեալ պատասեաց քահանայապետն զքահանայութիւն իւր». կ'ենթադրէ Ար. Նիսան — Արեգ :

Եփրեմ, Բ. (Համարարբառ) կը գրէ նաեւ տողերս. «Արդ քանզի դեռ յերանս Չաքարիայ էր Յովհաննէս... ակն ունէր ծաղիկն Արեգ ամսեան...» (էջ 18) : «Յղացաւ Եղիսարեթ ի Սահմի ամսեան... աւետարանեցաւ Մարիամու, որ օր Ժ էր Արեգ ամսեան, որպէս եւ Չաքարիայ, որ օր Ժ էր Հոռի ամսեան : Այս, առէ, Զ. ամիս է նորա : Այլ օրէնքն հրամայեն եթէ որ օր Ժ էր Արեգ ամսեան, արգելցեն զպահան... եւ ծնաւ նա որ օր Զ էր Քաղոց ամսոյ ըստ յունարէն <Յունուարի> թուոյ» :

Ս. Եփրեմի Համարարբառին ասորերէն բնագիրը չունինք ստուգելու համար յիշուած ամսանուններու ասորականը : Առանց տարակուսի Ս. Եփրեմ աչքի առաջ ունեցած է այն անվաւերական «Գիրն Տղայութեան Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր ասացեալ է Յակոբայ որդւոյ Յովսեփայ կղբօր Տեան», որուն սկզբնաւորութիւնն է. «Ի յառաջին ամի տէրութեան Աւգոստեայ կայսեր Հոռոմոց աշխարհին, ի թաղաւորութեանն Հերովդի արքայի Հրէաստանի Երուսաղեմացւոյ... էր այր ոմն մեծատուն յոյժ ի քաղաքին Նազարէթ, որում անուն էր Յովակիմ⁹...» : Այս տեղէն հաւանօրէն քաղած է Ս. Եփրեմ վերոյիշեալ տեղիքները : Ներկայիս ձեռքի տակ չունինք պրուածքս, բայց անոր հիման վրայ կատարուած խմբագրութիւնները¹⁰ կ'օգնեն մեզի վերհանելու մեզի ցանկալի ամսանունները. «Ի Թշրին ԻԲ, որ է հոկտեմբերի Թ, եղև յղութիւն Եղիսարեթի. եւ ի թամուզ ամսոյ ԺԶ, որ է յունիսի Ե, եղև ծնունդ Յով-

⁸ Հայերէն բնագիրը հանդերձ գերմաներէն թարգմանութեամբ հրատարակած է Հ. Մովսէս Մրայան. Das Martyrium des hl. Pionius. Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes. 28. (1914) էջ 376—405.

⁹ Ձեռագիր Երեւանի Պետ. Թանգարանի, Թ. 646, թղ. 2ա—148ա (յամէ 1239) :
¹⁰ Հրատարակուած՝ Անկանոն գիրք Նոր Կտակարանաց, Վենետիկ 1890, էջ 1—312 :

հաննու Մկրտչին» (էջ 9) : «Յորժամ հրեշտակն աւետեաց Մարիամու՝ Նիսան ամսոյ Ժե էր, որ էր պարիլի Զ. յաւուր չորեքշաբթի յերրորդ ժամու աւուրն» (էջ 19) : Էր օրն ծննդեան «Տրբէթ ամսոյ ԻԱ, յունուարի Զ» (էջ 36) :

Նոյն անվաւերականէն առած կը գրէ Գեորգ Լուեցի առ Յովհաննէս Բար-Շուշան.

«Արդ աւուրք պաշտաման կոչէ աւետարանին զՔաւուրթեան տօնն եւ զՏաղաւարահարացն զոր ի միասին տօնէր ամենայն Իսրայէլ յէ. ամսեան ի Թշրինի Ժ. սկսանէր օր քաւութեանն եւ կատարէր ի Ժե նորին ամսոյ. եւ Տաղաւարահարացն ի Ժե. Թշրին ամսոյ սկսանէր եւ կատարէր ի ԻԲ. նորին ամսոյ... Եւ եղև յղութիւն Եղիսարեթի ի ԻԳ. Թշրին ամսոյ, որ լինի ի հոկտեմբերի յԹ. եւ աստի մինչև յաւետիս կուտին ի Նիսան ի Ժե. ն եւ յապրիլի յէ. վեց ամիս ըստ Գարրիէլի ձայնին, մինչև ցնոյն յունուարի ի վեցն՝ ինն ամիս եւ հինգ օր¹¹ : Կ'ըսուի նաեւ Ստեփանոս Սիւնեցւոյ վերագրուած առ եպիսկոպոսն Անտիոքի թղթին մէջ. Յակոբոս Տեառնեղբայրն զՄիսնուզն «Ի Տիրէթայ ամսեանն ի ԻԱ. ն տօնէր (տպ. տան էր), որ է ըստ Հոռոմին ի յունուարի ի վեցն¹²» :

Ուստի Եղիսարեթի յղութիւնն կը պատահի (Բ.) Թշրին ամսոյն, այն է Սահմի : Ար. :

Մարիամ աւետումը կ'ընդունի Նիսան ամսոյն, որ է Արեգ : Ար. :

Չաքարիա կ'ընդունի աւետումը (Ա. Թշրին) ամսոյն, որ է Հոռի : Ար. :

Քրիստոս ծնաւ Տիրէթ ամսոյն, որ է Քաղոց, «որ օր Զ. էր... ըստ յունարէն (Յունուար) թուոյ» : Ար. :

Այնչափ զարմանալի չէ, որ հայ թարգմանիչները Ե. դարուն յունական եւ երբայական-ասորական ամսանունները հայկականին համաձայնեցնելու համար հետեւած են Ասորամակեդոնական եւ այսպէս կոչուած Արարական տոմարներուն, որքան զարմանալի է, որ իբր երկու դար ետքը յունագէտ հայ մը կամ հայագէտ յոյն մը նոյն արարական տոմարին հետեւելով հայերէն ամսանունները Հոռի՝ Սեպտեմբեր եւ Սահմի՝ Հոկտեմբեր թարգմանած է¹³ :

¹¹ Գրք Թղթոց, էջ 352—354 :
¹² Անդ, էջ 325 :
¹³ Աղաթանգեղոս, Տփղիս 1909, էջ 112 Հոռի-սիմի նահատակութեան օրը կը նշանակէ «ի քսան եւ ի թն ամսոյն Հոռի» եւ էջ 425 կը պատմէ, թէ Ս. Գրի-

Ե. դարու վերջերը թարգմանութեամբ Հայաստան բերուեցաւ Երուսաղեմեան ճառոցը, որուն անշարժ տօները նշանակուած էին յուլիանեան ամսաթուերով : Այս պարագան, հաւանօրէն, պատճառ եղաւ, որ Հայոց Եկեղեցական Տարին տակաւ առ տակաւ պատշաճեցուի Բիւզանդականին, որուն ինչպէս տոմարը (Ամ աշխարհի), նոյնպէս Եկեղեցական տարին կը սկսէր Սեպտեմբեր 1ին : Յայտնութիւնը կը տօնուէր Յունուար 6ին. Յովհաննու Մկրտչի Միսնուզը կը տօնախմբուէր Յունիս 24ին (որ էր Հայոց Նաւասարդ 1) եւ Յովհաննու Գլխատման տօնը կը կատարուէր Օգոստոս 29ին (որ էր տօնը կը կատարուէր Օգոստոս 29ին (որ էր Հայոց Սահմի 7) : Այսպէս նաեւ Առաքելոց Հայոց Սահմի 7) : Այս կը յորդորէ զմեզ իրենց որոշ օրերը : Այս կը յորդորէ զմեզ Բիւզանդական եւ Հայկական ամսաթուերը համեմատութեան մէջ դնել այսպէս.

Բիւզանդական	Ասորաց	Հայոց
Սեպտ. 1	30 Էլուլ	22 Տրէ
Հոկտ.	31 Թշրին Ա. 1	22 Քաղոց
Նոյ.	31 Թշրին Բ.	21 Արաց
Դկտ.	31 Քանուն Ա.	21 Մեհեկ
Յնվ.	31 Քանուն Բ.	20 Արեգ
Փետր.	28 Շբաթ.	19 Ահեկ
Մարտ.	31 Աղար	21 Մարերի
Ապր.	30 Նիսան	20 Մարգաց
Մայիս	31 Եար.	20 Հոռոց
Յունիս		19 Աւելեաց
Յունիս	30 Խաղիբան	24 Նաւասարդ
Յուլիս	31 Թամուզ	24 Հոռի
Օգոստ.	31 Ար.	23 Սահմի

Թէ ունէր Հայոց Եկեղեցական տարին իր որոշ օրերուն կապուած տօներն ու տօ-

գոր հրամայած է Ս. Յովհաննու եւ Աթանազիէի յիշատակն ի Տարօն տօնախմբել «ամ յամէ» Սահմի ամսոյն եօթին : Աղաթանգեղոսի յոյն կրկին թարգմանութիւնները (Agathangelus und die Akten Gregors von Armenien, neu herausgegeben von Paul de Lagarde, Göttingen 1887, էջ 45: Gerard Garitte, Documents pour l'etude du livre d'Agathange, Città del Vaticano, 1946, էջ 47) Հոռի ԻԶ. կը թարգմանեն 26 Սեպտեմբեր. իսկ արաբերէն թարգմանութիւնը նեն 26 Սեպտեմբեր. հրո. Ն. Մառ, հայերէն թարգմանութեամբ Յունիկ արքեպիսկոպոսի, Վաղարշապատ 1911, էջ 25) ունի 25 Հոկտեմբեր : Երկրորդ տեղի վրէժ «Սահմի է», de Lagarde ի յոյն բնագիրն (էջ 72) զիբը «Սահմի է», de Lagarde ի յոյն արար եւ յոյն կը վերածէ 7 Հոկտեմբեր, նորագիտ արար եւ յոյն օրինակները չունին : Չոր տեղ ջանք թափած է օրինակները չունին : Չոր տեղ ջանք թափած է Ա. von Gutschmid, Agathangelos, i. d. Zeitschrift der deutschen Morgenländischen Gesellschaft, 31 (1877), էջ 6—8, ամիսներու այս զուգակցութեան մը թարգմանչի ժամանակի մասին եզրակացութեան մը թափարկումները յիշատակելու համար, որ Հոռի հաւասարէ Սեպտեմբերի եւ Սահմի՝ Հոկտեմբերի. իսկ արաբ թարգմանիչը հետեւած է Ասորամակեդոնական տոմարին, մանկէն հետեւած է Ասորամակեդոնական տոմարին, որուն Հոկտեմբերը կը համապատասխանէ Հոռիի :

նախմբութիւնները, զորոնք կը կատարէր մասնաւոր ուխտադնացութիւններով, ծոմապահութիւններով եւ նուիրատուութիւններով, կը տեսնուի Փաւստեայ Բիւզանդեայ Պատմութեանէն: Կան այդ շարքին մէջ տոներ, որոնց հնութիւնը ըստ աւանդութեան մինչեւ Ս. Գրիգոր կ'իջնայ, ինչ ինչ նոյն իսկ Լուսաւորիչէն կարգուած կը համարուի: Փաւստոս այդ տոներէն յանուանէ կը թուէ մէկ քանին:

ա. Եկեղեցւոյ տօն. Նաւակատիքն Նախեկեղեցւոյն յԱշտիշատ:

բ. Տօն Յովհաննու ի Տարօն. «Մարդարէանոցին Յովհաննու»:

գ. Տօն Առաքելոց ի Տարօն. «Հանդիստ Առաքելոցն»: «Այս տեղիք վասն յառաջակարգութեան՝ կանոնաւ ի հայրապետացն եւ ի թագաւորացն պատուելալք լինէին»:

դ. «Եկեղեցին Թորդանու վասն զերեզմանացն հայրապետին Գրիգորի (եւ յաջորդացն նորա)»:

ե. «Յիշատակ թագաւորին Տրդատայ». «զի սիրելի էր աշխարհին պատուել զյառաջընծայն Քրիստոսի զթագաւորն իւրեանց Տրդատ»:

զ. «Նոյնպէս եւ զյառաջեպիսկոպոսն՝ զնախավաստակն զԳրիգորիոս»:

է. «Սոյնպէս եւ ի դաւան Այրարատեան զնախավկայսն Քրիստոսի, ուր Գայրանէն եւ Հռիփսիմէն կային հանդերձ զործակցօքն իւրեանց»:

«Վասն այսորիկ կամ եղև աշխարհին զնախնեաց ժամանակին հարանց եպիսկոպոսաց զայս տեղիս պատուել, ուր սոքա եղևալ էին» (Փաւստ. Գ. 14):

ը. Տօն Մարտիրոսաց: Փաւստոս, Գ. 3 կը գրէ. «Քանզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց հանդերձ թագաւորօքն եւ մեծամեծօքն, նախարարօքն եւ աշխարհախումբ բազմութեամբք պատուել զնոյն տեղիս (յԱշտիշատ), որ յառաջ էին տեղիք պատկերաց կոոցն... եւ եղեն տուն աղօթից եւ տեղի ուխտից ամենայն ումեք: Մանաւանդ յսցն ի գլխաւոր տեղին՝ յեկեղեցին ժողովել ի յիշատակ սրբոցն որ էին անդ, կատարել անդ ամի ամի եւթն անգամ (կարգա՞լ «յեւթներորդում Մահմի ամսոյ»): Որք զնոյն ունէին սովորութիւն առաւել եւս ի մեծի Մարգարէարան Մատրանն Յովհաննու. սոյնպէս եւ յԱռաքելարանս Տեառնաշակերտացն. սոյնպէս եւ ի Վկայարանս Մար-

տիրոսացն ամի ամի ժողովեալք՝ զորն տօնին յիշատակի նոցա վարուցն զործոց կենաց քաջութեան խմբեալ ցնծային»:

Ք. Տօն Ս. Գրիգորիսի յԱմարաս. «Եղին զնա առ եկեղեցւան, զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հաւուն Գրիգորիսի... եւ ամ յամէ աշխարհաժողովուրդք ի մի վայր ժողովեալ կողմանցն այնոցիկ եւ աշխարհաց դաւառացն այնոցիկ, զորա զօր տօնին զյիշատակ քաջութեանն ցնծան» (Փաւստ. Գ. 6):

ծ. Ի Բագաւան Յունիս 24ին կը տօնախմբուէր Յովհաննէս Մկրտչի Ծննդեան յիշատակը (տե՛ս վարը):

Թէպէտ Ե. դարու մատենադրութիւնը աղքատ է տօնակատարութեանց յիշատակութեամբ, բայց մեզի բաւականէն աւելի մանրամասնութեամբ Հայոց Եկեղեցական տարւոյ պատկերը կու տայ Մահակի վերագրուած կանոնախումբին Զ. հատուածը, թէեւ է. դարու առաջին քառորդէն:

Մահակի վերագրուած կանոնաց այս խումբը շատ հետաքրքրական է Հայ Եկեղեցւոյ Տօնացոյցի ուսումնասիրութեան համար:

Կանոնացս խմբադիրը կը զանազանէ տօներ, երբ ժողովուրդին նուիրները կը պատկանին Վանքին, եւ դարձեալ տօներ երբ այդ նուէրները կը վերաբերին Քահանայից:

- Ա. 1. Տօն Ս. Յովհաննու Մկրտչին եւ վկային:
- 2. Տօն ամենայն Մարտիրոսաց զոր Մատրունս կոչեմք:
- 3. Վարդապետին:
- 4. Տօն սրբոյ Յայտնութեան:
- 5. Քառասնորդք նորին:
- 6. Տեստնընդառաջին:
- 7. Առաջաւոր պահոց:
- 8. Տօն Միջնոց Որդացն Չատկին:
- 9. Օր Ղազարու:
- 10. Մեծ հինգշաբթի Չատկին:
- 11. Երկուշաբթի Չատկին:
- 12. «Դիր Չատկին»:
- 13. Տօն Համբառնալոյ Տեառն յերկինս:
- 14. Տօն վախճանելոցն յերս Հրոտից ամսոյ:

- Բ. Ամուսնացելոց քահանայից:
 - 1. Շարաթն Չատկին:
 - 2. Չատկին սուրբ:
 - 3. Բ. Չատկին:

- 4. Բ. Չատկէն ի վեր կիրակէքն ամենայն:
- 5. Տօն Ս. Աստուածածնին:
- 6. Վարդապետն:
- 7. Քառասնորդք Առաքելական տօնից:
- 8. Հաւատացելոց Չատկին:
- 9. Տօնք Բարեկենդանին:
- 10. Ողորմեանն Մեծ:
- 11. Տօնք յանուն Առաքելոց եւ Մարգարէից:

Ասոնց մասին պիտի խօսինք առանձին առանձին:

(Շարունակելի:) Ը. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՎԵՍՊՈՒՐԵՎՈՆ - ՎԵՆԻ ՎՆՆՔԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԸՆԳՀԵՆՈՒՐ՝ ՋՆՆԵՋՈՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՆԵՐ

(Շարունակութիւն):

13. ՎԱՆՔԵՐՈՒ ՄԷՋ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ՊԱՇՏՕՆԵՐ ԿԱՄ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐ

Վանից հայր, որ ստէպ իբր վանհայր կամ վանքի առաջնորդ կը նշանակէ եւ երբեմն ուրոյն պաշտօն մը կ'ազնարկէ: Յիշատակադրութիւններու մէջ եւ այլուր կը հանդիպինք՝ «Յովհաննէս վանից հայր էր» (ՎՎՎ. Ա. էջ 194), «եւ զգլխաւոր վանանցն (ՎՎՎ. Ա. էջ 194), «եւ զգլխաւոր վանանցն լեալ եղևալ (էին) ի խորաբոր խաւարային բանտի» անդ Ա. էջ 285—286), «Վարդապետայր» (էջ 290), «Ստեփանոս՝ հայր վանաց» (անդ Բ. էջ 691):

Վեքիլ. վանքերու մէջ առաջնորդներու եւ վանհայրերու տեղապահներ՝ վեքիլներ կը կարգուէին՝ անոնց բացակայութեան, անկարողութեան, մանաւանդ ծերութեան շրջանին եւ աթոռին պարապութեան պարապին (հրաժարումի եւ մահուան պատճառաւ), հմտ. ՎՎՎ. Ա. էջ 39, 71, 242, 325, 327 եւն):

Հերպետ կամ հէրպետ կամ հայրպետ: Յիշատակարաններու կամ յիշատակադրութիւններու մէջ ստէպ այս բառին կը հանդիպինք՝ «Յիշեցէք... զՄկրտիչ հէրպետն» (ՎՎՎ. Ա. էջ 203), «ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս... եւ հէրպետութեան Կարապետ արեղային, յոյժ խոնարհ եւ բարեմիտ, քրտնաջան ի բանս սուրբ

ուխտիս» (ՎՎՎ. Ա. էջ 351), «Եւ ի հէրպետութեան բարեբարոյ եւ մաքրամիտ կրօնաւորի Մկրտիչի սրբասերի» (ՎՎՎ. Ա. էջ 372), «Յիշել զհէրպետ տէր Մխիթարն», (անդ Ա. էջ 374), «...տէր Խաչատուր հէրպետին» (անդ, Ա. էջ 376, հմտ. անդ դեռ՝ էջ 16, 62 (198՝ հէրպետն), 221—224, 226, 265, 267, 307, 310, Բ. 407, 452, 691, 693 եւն եւն):

«Երեւակ»ի մէջ 1858 ին (Թ. 43, էջ 203—204) կը հրատարակուի Իգնատիոս վ. ի Ղուկասի Աւետարանին մեկնութեան կցուած յիշատակադրութիւն մը՝ «Ի թուրքերութիւն հայկազեան տոմարիս Ռժի (1671) ի վանս Ղազարու... եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Դաւիթ ճըզնաղեաց վարդապետի եւ տէր Ստեփանոս կրօնաւոր հէրպետի»: Հրատարակելը յիշատակադրութեան կը կցէ հետեւեալ խորհրդածութիւնը՝ «Ծանօթ չէ մեզի թէ առաջնորդին քով հէրպետ ըսածը ինչ պաշտօն ունէր, բայց մեծ եւ պատուաւոր պաշտօն մը եղած պիտի ըլլայ, որ հոս զատ կը յիշուի: Արեւելքի կողմերը տեղ տեղ հայր եքր հէր կ'արտասանեն, այս արտասարտը հէր կ'արապետն ալ կ'ըլլայ հայրանութիւնովս հէրապետն ալ կ'ըլլայ հայրապետ, եւ որովհետեւ կրօնաւոր քահանայքն հայր անուանելը սովորութիւն եղած է. այս առումով հէրպետն ալ կ'ըլլայ կրօնաւորներու գլուխի եւ վանհայր կամ արքայ բառին նշանակութիւնը կ'ունենայ եւ առաջնորդ եղած ատենն ալ Արքայն վանքին կրօնաւորներուն վրայ անմիջական իշխանութիւն ունենալով՝ անունը յատուկ յիշուելու չափ մեծ էր պաշտօնը»: Իսկ «Նօշուելու չափ մեծ էր պաշտօնը»: Իսկ «Նօշուելու» ի հրատարակելը հէրպետ բառին իմաստին մասին կը գրէ՝ «վերակացու ուխտին կամ փոխանորդ վանհօր ի վերայ զործակալաց մենաստանին» (էջ 175, ծն. 5): Այսպէս՝ մինչ առաջինը հէրպետին իշխանութիւնը կամ պաշտօնը վանականներու կամ միաբաններու վրայ կը տարածէ. երկրորդը վանքին զործակալներու՝ պաշտօնանեաներու վրայ: Նկատի ունենալով յիշատակադրութիւնները պիտի ըսենք թէ այս պաշտօնը ընդհանրապէս մեծ վանքերու մէջ զոյուութիւն ունէր եւ զայն ստանձնողին հանդիպինք՝ «Յիշեցէք... զՄկրտիչ հէրպետն» (ՎՎՎ. Ա. էջ 203), «ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս... եւ հէրպետութեան Կարապետ արեղային, յոյժ խոնարհ եւ բարեմիտ, քրտնաջան ի բանս սուրբ